ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 07 սեպտեմբերի 2021թ.

2021 թվականի սեպտեմբերի 07-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանն ու Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը, գլխավոր մասնագետներ Դանիել Դանիելյանը և Սարգիս Ղազարյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 13-ի N 26-Ն, 2021 թվականի հոկտեմբերի 05-ի N 160-Ն, 2012 թվականի հունիսի 29-ի N 28-Ն և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 119-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն աճուրդային կարգով օտարելու, մեկնարկային գները հաստատելու և համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի N 25-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

Համայնքի ավագանու որոշումների նախագծերիի քննարկում:

Օրակարգի առաջին՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին,*** հարցի վերաբերյալ Ս. Ղազարյանը ներկայացրեց, որ ՏԱՊ-ի իրականացման կիսամյակային հաշվետվությունը կազմվել է մեթոդական ուղեցույցի համաձայն և մանրամասն ներկայացված են Բյուրեղավան համայնքի 2021 թվականի ՏԱՊ-ով նախատեսված և 2021 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները: Որոշման նախագծով առաջարկվում է ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվությունը:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երկրորդ՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 13-ի N 26-Ն, 2021 թվականի հոկտեմբերի 05-ի N 160-Ն, 2012 թվականի հունիսի 29-ի N 28-Ն և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 119-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին,*** հարցի վերաբերյալ Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 13-ի N 26-Ն, 2012 թվականի հոկտեմբերի 05-ի N 160-Ն, 2012 թվականի հունիսի 29-ի N 28-Ն և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 119-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Բյուրեղավան համանքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի կատարմամբ:

Անհրաժեշտություն է առաջացել համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 13-ի N 26-Ն, 2012 թվականի հոկտեմբերի 05-ի N 160-Ն, 2012 թվականի հունիսի 29-ի N 28-Ն և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 119-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու:

Նորմատիվ իրավական ակտերին ներկայացվող պահանջներից ելնելով՝ անհրաժեշտ է նշված որոշումներն ուժը կորցրած ճանաչել՝ հետագայում նույն բնույթի անհատական իրավական ակտ ընդունելու նպատակով:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 13-ի N 26-Ն, 2021 թվականի հոկտեմբերի 05-ի N 160-Ն, 2012 թվականի հունիսի 29-ի N 28-Ն և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N 119-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երրորդ՝ *Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,* հարցի վերաբերյալ Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարը ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2021 թվականի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու առաջարկություն է արել:

Առաջարկությունը արվել է պայմանավորված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով համայնքի ղեկավարին վերապահված հասարակական կարգի պահպանության, քաղաքաշինության, առևտրի և այլ բնագավառների խախտումները բացահայտելու և կանխարգելելու, ինչպես նաև տրանսպորտի բնագավառի լիազորությունների իրականացման համար աջակցության անհրաժեշտությամբ:

Փոփոխված հաստիքացուցակով ավելացել են երկու քաղաքացիական աշխատանք իրականացնող հաստիքներ՝ Վարչական իրավախախտումների գծով իրականացվող աշխատանքների պատասխանատու և Տրանսպորտի բնագավառում իրականացվող աշխատանքների պատասխանատու:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի չորրորդ՝ *Հայաստանի Հանրապետության Կատայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն աճուրդային կարգով օտարելու, մեկնարկային գները հաստատելու և համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի N 25-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին,* հարցի վերաբերյալ Դ. Դանիելյանը ներկայացրեց, որ Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին

մասի և հիմք ընդունելով «Վարմոն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 19-ի «143-01/Վ-021» գրությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ առաջարկվում է համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով օտարելու Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ գույքերը՝

- ✓ Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 16 շենքի թիվ 44 հասցեի 83.4 քմ ընդհանուր մակերեսով (վկայական 2730770, տրված 2010 թվականի ապրիլի 14-ին) տարածքը,
- ✓ Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 13/2 հասցեի 0.04066 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման (վկայական N 22062012-07-0260, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0013-0144) հողամասը,
- ✓ Բյուրեղավան քաղաքի 13/4 հասցեի 0.04388 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման (վկայական N 22062012-07-0262, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0013-0143) հողամասը,
- ✓ Բյուրեղավան քաղաքի թիվ 13/6 հասցեի 0.0415 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման (վկայական N 25112014-07-0061, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0013-0147) հողամասը,
- ✓ Բյուրեղավան քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոց թիվ 27 հասցեի 0.1442 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման (վկայական N 2822156, տրված՝ 2011 թվականի հուլիսի 11-ին, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0013-0131) հողամասը:

Սույն որոշման նախագծով հաստատման է ներկայացվում վերը նշված գույքերի մեկնարկային գները:

Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ որոշման նախագծով անվավեր է ճանաչվում Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի «Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող գույքն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին» N 25-Ա որոշումը, որով հաստատվել էր Բյուրեղավան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 16 շենքի թիվ 44 հասցեի տարածքի մեկնարկային գինը:

Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 05-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին» N 160-Ն որոշմամբ նույնպես հաստատված է եղել Բյուրեղավան քաղաքի 16 շենքի թիվ 44 հասցեի տարածքի մեկնարկային գինը:

Այսինքն, 2020 թվականի ապրիլի 15-ի N 25-Ա որոշումն ընդունվել է՝ հակասելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի:

Նորմատիվ իրավական ակտերին ներկայացվող պահանջներից ելնելով՝ N 160-Ն որոշումներն ուժը կորցրած է ճանաչվել՝ նույն բնույթի անհատական իրավական ակտ ընդունելու նպատակով:

Որոշվեց՝

համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերն աճուրդային կարգով օտարելու, մեկնարկային գները հաստատելու և համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի N 25-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի վերջին՝ ***Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին,*** հարցի վերաբերյալ Դ. Դանիելյանը ներկայացրեց, որ Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով օտարելու Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը՝

- ✓ Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց 40/1 հասցեի 0.19894 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման հողամասը (վկայական՝ N 30082021-07-0148, կադաստրային ծածկագիրը՝ 07-003-0020-1105),
- ✓ Զրաբեր գյուղի 8.46224 հեկտար, որից՝ 7.94794 հեկտար արոտավայր, 0.5143 հեկտար վարելահող, մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը և վարելահողը (վկայական՝ N 02082021-07-0065, կադաստրային ծածկագիրը՝ 07-055-0212-0148),
- ✓ Զրաբեր գյուղի 10.125 հեկտար, որից՝ 9.31505 հեկտար արոտավայր, 0.80995 հեկտար այլ հողատեսք, մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը և այլ հողատեսք հողամասը (վկայական՝ N 05082021-07-0113, կադաստրային ծածկագիրը՝ 07-055-0212-0147),
- ✓ Զրաբեր գյուղի 3.18 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը (վկայական՝ N 02082021-07-0088, կադաստրային ծածկագիրը՝ 07-055-0212-0146):

Սույն որոշման նախագծով հաստատման է ներկայացվում վերը նշված հողամասերի մեկնարկային գները:

Որոշվեց՝

համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և

մեկնարկային գները հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան